

ԱԶԳԱՅԻՆ

Վաղուց լուր էր տարածուած, որ Իտալիոյ գահաժառանգ՝ Նէապօլսի Իշխան Վիկտոր Էմանուէլը մտադիր է այցելելու Սեանայ վանքն և Մայր Աթոռն Ս. Էջմիածնի։ Անցեալ տարիլի 21 ին Նորին Բարձրութիւնը երեկոյեան ժամանում է Ելենովկա գիւղն, Սեանայ ծովի ափին և այնտեղ գիշերելու էր։ Երեւանի թեմի փոխանորդ Գեր. Սուքիաս Եպիսկոպոսը, թարգման իրան ունենալով Մայր Աթոռոյ ձեմարանի նկարչութեան ուսուցիչ Խալախօս մեծ. Պ. Վարդգէս Սուրէնեանցին և ներկայանալով Նորին Բարձրութեան՝ իւր թեմի սահմանում նոյն երեկոյ, ողջունում է նորա գալուստն Արարատեան աշխարհս ի գիմաց Նորին Օծութեան՝ Վեհափառ Հայրապետին ամենայն Հայոց հետեւեալ խօսքերով.

«Ձերդ Արքայական Բարձրութիւն.»

«Բաղդ ունենալով վայելելու Մեծին Իտալիոյ Գահաժառանգիդ ներկայութիւնն Հայաստան աշխարհում՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Քահանայապետի կողմանէ կշնորհաւորեմ Ձերդ Արքայական Բարձրութեան ողջամբ եկաւորութիւնը, և ամենախոնարհ յորգանօք կհայցեմ Ձերդ Բարձր բարեհաճութիւնը՝ շնորհաբեր այցելութեամբ պատուել Սեանայ հինաւուրց միայնաւորաց անապատը և Արարատեան Մայր եկեղեցի Ս. Էջմիածին»:

Նորին Բարձրութիւնը շնորհակալութիւն է յայտնում և խոստանում անշուշտ այցելելու Ս. Էջմիածին և Նորին Օծութեան օրհնութիւնն առնելու, բայց Սեան երթալը կախուած կլինի եղանակից, որովհետեւ այդ երեկոյ եղանակը շատ անխորժ է լինում. հողմն, ալեկոծուած լիճն և ձիւնախառն անձրեւը յաջողութիւն չեն խոստանում գիտաւորութեան յաջողութեան։ Միւս առաւօտ պարզ երկինքն և խաղաղ օդն ամենքին ուրախութիւն են պատճառում։ Վաղի մեծ նաւակը

գորգերով ու վայրի ծաղիկներով զարդարած՝ սպասելիս է եղել ելննովկա գիւղի ծովեզրում: Նորին Բարձրութիւնն իւր ուղեկիցներով առաւօտեան 9 ժամին մտնում է նաւակն, որ բայ առաքաստով և թիալարութեամբ միաբանից՝ ճանապարհ է րնկնում գէպի վանքը: Քսանի չափ այլ փոքրիկ նաւակներ, լիբը հայ գիւղական ժողովրդոց բազմութեամբ, երգով և տեղական երաժշտութեամբ ուղեկցում են Նորին Բարձրութեան: Երբ Նորին Բարձրութեան նաւակը մերձենում է Սևանայ կղզու ափին, շուրջառազգեստ միաբանութեան գլուխն անցած Սուքիաս Սրբազան եպիսկոպոսը դիմաւորում է Նորին Բարձրութեան հետևեալ խօսքերով.

«Ձերդ Արքայական Բարձրութիւն.»

«Սևանայ անապատիս աղօթաւոր միանձուռք յայտնելով Ձերդ Արքայական Բարձրութեան ամենախորին շնորհակալիք՝ այս գերազանց պատուոյ և շնորհաբեր այցելութեան համար սոյն խաղաղութեան և անդորրութեան սրբավայրը՝ քաղցր պարտականութիւն կհամարեն աղօթել առ Ամենաբարձրեալն Աստուած՝ պարգևել Ձեզ երկայն և բարերջանիկ կեանք՝ մեծին Իտալիոյ բաղդաւորութեան և յառաջագիմութեան համար, որպէս զի նա միշտ իւր ձեռքումն ունեցած լուսաւորութեան վերածնութեան և անվրդով զարգացման դրօշակն բարձր պահպանէ յօգուտ ընդհանուր մարդկութեան, և խաղաղութեան հրեշտակն ուղեկից առնէ մեծ Գահաժառանգիդ Ձեր ամենայն տարաշխարհիկ ուղեւորութեանց ժամանակ՝ մինչև ողջամբ հասանիլն ի Հայրենիս՝ յուրախութիւն սրտի նորա համօրէն որդւոց. Ամէն:»

Պ. Թարգմանը Թարգմանում է Իտալերէն և Նորին Բարձրութիւնը Սրբազան փոխանորդի աջը սեղմելով՝ շնորհակալութիւն է անում: Ասլա միաբանութիւնը շարական երգելով առաջնորդում է Մեծ Հիւրին եկեղեցին, ուր յարմարաւոր աղօթքն ու քարոզները կարգալից յետ՝ Սրբազան Սուքիաս եպիսկոպոսը «պահպանիչ» ասելով օրհնում է Մեծ Հիւրին և ժո-

ղնվողոց: Սրանից յետ Թագաժառանգ Իշխանը զննում է վանքի սրբութիւնքն ու հնութիւնքն, ապա բարձրանում է սարն, զննում է Առաքելոց եկեղեցին իւր հնութիւններով, որոնցից առանձնապէս գրուում է Նորին Բարձրութեան ուշքը արանոս փայտից շինած դռուն իւր գեղեցիկ փորագրութեամբ, որ յիշատակ է Աշոտ Թագաւորի: Իշխանը դուրս գալով եկեղեցուց՝ կանգնում և նայում է շրջակայքի վերայ և հիանում տեսարանի գեղեցկութեամբ:

Ապա իջնում են սարից և Իշխանն իւր ուղեկիցներով, տէրութեան կողմից նշանակած պաշտօնատարով ու Երեւանի Պ. Նահանգապետի հետ հրաւիրուում են նախաճաշի: Իշխանն ընդունում է հրաւերը: Մի սենեակում առանձին սեղան նստում են Մեծ Հիւրը, Սրբազան Փոխանորդն և Թարգմանն. իսկ միւս սենեակում այլ հիւրերն և միաբանութիւնը: Նախաճաշից յետ Նորին Բարձրութիւնը շնորհակալիք յայտնելով Նորին Սրբազնութեան և բոլոր միաբանութեան՝ մոնում է նաւակն Ելեհովկա վերադառնալու: Այստեղ էլ Արժ. վանահայր Կարապետ վարդապետը յայտնում է Նորին Բարձրութեան շնորհակալութիւն, որ բաղդաւորել էր իրանց վանքն իւր այցելութեամբ: Նաւակը շարժուում է և ճանապարհորդները յաջողութեամբ դառնում են Ելեհովկա:

Երեք շաբաթ շարունակ ամպամած երկինքն ապրիլի 23ին պարզուեցաւ և երկու Մասիսներն իրանց ձիւնափայլ գագաթներից քօղը վերցրին և իրանց բոլոր փառահեղութեամբ ներկայանում էին այդ օրը հեռաքրքիր նայողին: Կարծես հէնց ընդմեջին ինքն հասկանում էր, որ օրը հանգիստւոր է և Մայր Աթոռոյս և Արարատեան աշխարհին գալիս է այդ օրը մի Մեծ Հիւր: Հիւրը Խալիլոյ Թագաժառանգ, Նէտաօլսի Իշխան Ղիկիտոր Էմմանուէլն էր: Ժամը 11ին եկեղեցու զանգակների ձայներն աւետեցին Նորին Բարձրութեան գալուստը: Ս. Աթոռոյս վանքի պարսպի մեծ դռուը զարդարած էր ուռնու աճիւ-

դերով, այստեղից մինչև Տրդատայ դուռը փռած էր կանաչ և
պատերը կանաչ ճիւղերով զարդարած: Տրդատայ դռնից մինչև
եկեղեցու մէջ իջման տեղը՝ ճանապարհը ծածկած էր կարմիր
մահուդով և զառ դիբայով: Ժամը 11ին Մեծ Հիւրի կառքը
կանգնեցաւ Վանքի հրապարակում, ուր Լուսարարապետ Երե-
միա Նախկոպոսը զգեստաւորուած՝ Ս. Աւետարանն և Աստուա-
ծածնայ պատկերն ի գիրկ և բոլոր միաբանք շուրջառաջեցող
խաչ ու խաչուառներով, երկու սարկաւազունք բուրդառնի-
րով և երգեցիկ խումբը՝ դիմաւորեցին Նորին Բարձրութեան:
Լուսարարապետ Նախկոպոսն ողջունեց գալուցոր: Նորին
Բարձրութիւնը երեսը խաչակնքելով խոնարհեց Ս. Աւետարանի
և Աստուածածնայ պատկերի առաջ:

Ապա ձեմարանի աշակերտք ճանապարհի երկու կողմը շարե-
շար սկսան շարժիլ, նոցա հետեւում էին երգեցիկ խումբը և
միաբանք երկշարք և Նորին Բարձրութիւնը Սրբազան Լուսա-
րարապետի կողքով: Հանդիսականք Մեծ Հիւրի հետ մոտան
եկեղեցին: Նորին Օծութիւն Վեհափառ Հայրապետն ազգիս
զգեստաւորած, մի ձեռն խաչ կենաց փայտով և միւս ձեռն
հովուական գաւազանը, դիմաւորեց Նորին Բարձրութեան իջ-
ման սեղանի առաջ և խաչակնքելով շնորհաւորեց և օրհնեց
Նորա գալուստն հետեւել խօսքերով:

«Ձերդ Արքայական Բարձրութիւն»

«Մայր Եկեղեցիս Հայաստանայց Կաթողիկէ Ս. Էջմիածին
որապաշտօնաւոր դատուը հոգեւորականաց իւրոց՝ հոգեզուարճ ու-
րոյթութեամբ ընդ յառաջ ելանէ Ձերում Արքայական Բարձ-
րութեան. իսկ մեք խորին յարգանքօք ողջունեմք զփառաւոր
գալուստ Գահաժառանգ Իշխանիդ Մեծին Իտալիայ՝ յայս յարկ
Սրբութեան:

Օրհնեալ է Աստուած, որ ի ձեռն հրեշտակին խաղաղութեան
անփորձ և անվնաս առաջնորդեաց Ձերում Բարձրութեան
յայցելութիւն հնադարեան ծաճարիս:

Երանի՛թէ՝ յաջողէր մեզ դոյզն ինչ լցուցանել զփափագ ցան-

կուլթեան սրտի Ձերոյ՝ մերովք նուիրական հնուլթեամբք, որք գանձին ի Մայր Աթոռոջս:

Օրհնեսցէ՝ Տէր Աստուած զմուտ Ձեր յայս աշխահ Արարատեան, որ երկիցս հանդիսացեալ է խանձարուր մարդկուլթեան:

Օրհնեսցէ՝ Տէր Աստուած զառաքինի զկեանս Ձեր և զԹագաւորուլթիւն Մեծին Իտալիոյ և բարեյաջող վերադարձ տացէ Ձերում Բարձրուլթեան ի հայրենի ժառանգուլթիւն Ձեր, ամէն:

Մեծ. Պ. Վարդգէս Սուրենեանցը թարգմանեց Իտալերէն չեզուով և Նորին Բարձրուլթիւնը պատասխանեց, յայտնելով իւր շնորհակալիքն օրհնուլթեան և բարեմաղթուլթեան համար: Երեմիա Եպիսկոպոսը ասաց «Սուրբ եկեղեցեաւս» քարոզը, Նորին Օծուլթիւնը «Ի մէջ տաճարիս» աղօթքը. ապա Սրբազան լուսարարապետը «Սուրբ խաչիւս» քարոզն, որից յետ Հայրապետը «Պահպանիչ» ասելով՝ օրհնեց Թագաժառանգին Մեծին Իտալիոյ՝ Իշխան Վիկտոր Էմմանուէլին և ներկայ ժողովրդոց: Ապա երկու եպիսկոպոսունք առաջնորդեցին Նորին Բարձրուլթեան Մասանց խորանը, ուր սեղանի վերայ դարսած էին Աթոռոյս նշանաւոր Սրբուլթիւնքն, որոնց իւրաքանչիւրին յարգանք մերձեցաւ Մեծ Հիւրն և իւր յիշատակարանում նշանակեց իւրաքանչիւրի անունն: Տնտղեց և նշանաւոր զգեստներն, ապա մուտ գաւազանոց սենեակն, աստի թանգարանն, ուր Նորին Օծուլթիւնը, զգեստը հանած, առաջ եկաւ թագաժառանգ Իշխանին, որ շնորհակալուլթիւն յայտնելով՝ խնդրեց Նորին Օծուլթեան դառնալ Վեհարան և հանգստանալ: Իսկ ինքը եկեղեցու ամեն մասերը զննելից և նշանակելից ու կարեւոր տեղեկուլթիւնները հարցնելից յետ՝ դուրս եկաւ եկեղեցուց, և շրջելով եկեղեցու շուրջը՝ նկատեց ամեն գերեզմաններն, եկեղեցու և զանգակատան փորագրուլթիւնը ու տրձանագրուլթիւնքն և նշանակելով յիշատակարանում՝ գնաց Վեհարան: Նորին Օծուլթիւնը դիմաւորելով Իշխանին՝ առաջնորդեց ծաղկեայ դահլիճն, ուր կարճ միջոց խօսելից յետ, Նորին Բարձրուլթիւնը յայտնեց ցանկութիւն գրադարանը տեսնելու: Այստեղ էլ Նորին Բարձրուլթիւնը կէս ժամից աւելի մնալով՝ մանրամասնաբար զննեց նշանաւոր

ձեռագիրներն ու նոցանկարներն ու կարեւոր տեղեկութիւնքը գրելով յիշատակարանի մէջ, շնորհակալութիւն յայտնեց և վերագործաւ Վեհարան, ուր ճոխ սեղան էր պատրաստած Մեծ Հիւրի համար: Վեհարանի դահլիճում առանձին սեղան էր գցած Նորին Բարձրութեան և նորա աջակիցների, Տէրութեան կողմից նշանակած պաշտօնակառար գաղտնի ներգործական խորհրդական Պ. Հսքքելի և Երեանի Պ. Նահանգապետի համար: Ճաշկերոյթի վերջին Նորին Օծութիւնն առաջարկեց Թագաժառանգ Իշխանի և սա փոխարարձաբար Նորին Վեհափառութեան կենաց բաժակներ, որոնք յոտնկայս դատարկուեցան: Ճաշից յետ Նորին Օծութիւնը առաջնորդելով Իշխանին և նորա ուղեկիցներին ծաղկեայ դահլիճն, օրհնեց և անձամբ կախեց Նորին Բարձրութեան պարանոցը ռսկեայ խաչ զմրուխտներով ընդելուզած և մէջ տեղում խոշոր ադամանդով, որոյ տակը շինած էր փղբրիկ պահարան կենաց փայտի մասունքի համար, յանձնեց նոյնպէս Իտալիոյ բոլոր արքայական գերդաստանի օրհնութեան կոնդակը: Իշխանը յայտնելով իւր շնորհակալութիւնն Նորին Օծութեան օրհնութեան և սիրալիր ընդունելութեան համար, քանիցս կրկնեց, որ երբէք չի մոռանալ Նորին Օծութեան և Ս. Էջմիածինը: Ապա իւր հրաժարականը տալով Նորին Օծութեան, Թագաժառանգ Իշխանը բուլլարով հետիոտս գնաց ձեմարան, ուր տեսուչ Արժ. Նահապետ արեղայն դիմաւորեց Նրան և աշակերտք, որոնք դուրսը շարուած էին, սկսան երգել ազգային երգեր: Իշխանը գլխարկը հանելով ամենքին ողջունեց և մտաւ ձեմարան, ուր տնտղեց գրադարանն ու հանդիսարանն: Ապա մի քանի կարեւոր տեղեկութիւնք հարցնելով, իւր անունը ստորագրեց այցելուաց մատենում, և շնորհակալութիւն անելով ձեմարանի վարչութեան՝ հրաժարեցաւ: Աշակերտաց երգեցիկ խումբը մինչև կառքը երգելով ճանապարհ գցեց Մեծ Հիւրին: Ժամը 3 1/2ին գնացքն ուղղեցաւ դէպի Երեան: